ՖԷՆԹԸԲՐՊՐԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՆԱՄԱԿԸ ԱՌ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐԸ

ԼԻՍՊԻՆԹ ՊԱԼԱՏ

13 Յուլիս 1942

Ամենապատիւ
Տ. Մեսրոպ Ս. Արքեպս. Նշանեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Վանք Հայոց Սրբոյ Յակոբայ Տեառնեղբօր
Երուսաղէմ

Առ Սիրեցեալ Եղբայր մեր, Տէր Մեսրոպ Սրբազան Նշանեան,
Պատրիարք Հայոց Երուսաղէմի, ողջոյն ի Քրիստոսէ ի Տեառնէ։

Կը գրեմ իմացնելու Ձեր Սրբազնութեան, իբրեւ գլխաւոր առաջնորդի Հայ Ազգի վաղեմի եկեղեցւոյն, նկատի ունենալով որ Էջմիածնայ և Սսոյ Կաթողիկոսութեանց Սթոռները թափուր են, և հաղորդելու թէ Ապրիլ ամսոյ 23ին, Անգլիոյ պաշտպան Ս. Դէորդայ տօնին, ես օրինաւորապէս յԱթոռ հրաւիրուեցայ Ֆէնթբրպրրիի Մայր Տաճարին մէջ, իբրև Արքեպիսկոպոս Ֆէնթբրպրրիի, Առաջնորդ և Մետրապոլիտ բովանդակ Անգլիոյ։

Կ'օգտագործեմ այս պատեհութիւնը, խնդրելով Ձերդ Ամենապատուութենէն որ ընդունիք իմ յարգանաց և հիացմանս հաւաստիքը և դայն փոխանցէք, եթէ կարելի է, Ձեր եղբայրակից եկեղեցական պետերուն, առաջնորդներուն հինաւուրց Հայ եկեղեցւոյ, և Ազգին, կղերին ու ժողովրդեան։

Իմ նախորդներուս, Լորտ Տէյվիտսըն և Լորտ Լանկ Արքեպիսկոպոսներուն, Անգլիոյ եկեղեցիի ժողովրդեան և կղերին հետ սքանչացումով դիտած եմ և յարգանքով տեսած եմ այն համբերատար յարատեւութիւնը և հաւատարմութիւնը որով Աւետարանասէր հայ ազգը, ի սէր Քրիստոնեայ անուան, դառն վիշտեր կրած է ամբողջ դարերու ընթացքին եւ յատկապէս վերջին տարիներուն։ Գնահատանքս կը յայտնեմ այն թանկագին նպաստին համար զոր Հայ եկեղեցին բերած է անցեալին մէջ քրիստոնէական քաղաքակրթութեան, և իր պատրաստակամ ու յօժար մասնակցութիւնը ընծայած է ներկայիս քրիստոնէական զատին ծառայութեան մէջ, որուն համար կ'աղօթեմ որ Աստուած առատապէս իր բարութեամբը վարձահատոյց լինի։

Բաց այսի, այս նամակին ինձ ընծեռած առիթը կ'օգտագործեմ յայտնելով Ձերդ Ամենապատուութեան իմ գնահատանքս այն սիրալիր և սրտակից եղբայրական յարաբերութեանց համար որ երկար ատեն գոյութիւն ունեցած է Հայ եկեղեցւոյ Վեհափառ Կաթողիկոսներուն, այլ նուիրապետական ներկայացուցիչներու և Ֆէնթբլպրրիի Արքեպիսկոպոսներու միջև, ու բարեկամական այն կապերուն և փոխադարձ յարգանքին համար որ գոյութիւն ունի Հայ եկեղեցւոյ և Ազգին ու Բրիտանական Հասարակապետութեան, եկեղեցիներու և ժողովուրդներու միջև։ Անկեղծ փափաքս է որ կարենամ օգտակար հանդիսանալ ու նպաստել այդ կապերու առաւելագոյն զօրեղացման ու զարգացման համար։

Ի մասնաւորի կը փափաքիմ երախտագիտութեամբ գնահատել նաև այն բարեկամութիւնը և բարեացակամութիւնը զոր Ձերդ Ամենապատուութիւնը և Ձեր նախորդները շարունակ յայտնաբերած են Երուսաղէմի մեր Անկիլիքան Եպիսկոպոսներուն հանդէպ, և յատկապէս Գերաշնորհ Տքթ. Ճորճ Ֆրանսիզ Կրահամ Պրաունի հանդէպ։ իմ գոհունակութիւնս կը յայտնեմ նաև որ Ձերդ Ամենապատուութիւնը թոյլատրած է Հոգեշնորհ Կանոնիկոս Զարլըս Թ. Պրիճմէրին մատուցանելու իր ծառայութիւնները Ձեր Աստուածաբանական ճեմարանի ուսանողներուն։

Կը մատուցանեմ նաև իմ շնորհակալութիւններս այն հիւրամեծարութեան համար որով Դուք և Ձեր բոլոր նախորդները ցոյց տուած էք Երուսաղէմ այցելող Անկլիքան ուխտաւորներուն, Ձեր հինաւուրց, հռչակաւոր և խորհուրդներով օծուն Սուրբ Յակոբայ Տեառնեղբօր Մենաստանէն ներս։ Ձեր շարունակական խնամքին, աղնուութեան և բարութեան կը յանձնենք Նորին Վեհափառութեան մեր թագաւորին զինեալ ուժերուն եկեղեցականները և զօրավարները ու զինուորները, որոնք այժմ կը ծառայեն Պաղեստինի մէջ և որոնց հոգևոր խնամքը յանձնուած է մեր եկեղեցականներուն։

Ցուսալով Ձեր Ամենապատուութիւնը և Ձեր եղբայրակից եպիսկոպոսները, կղերը և ժողովուրդը կ'աղօթեն ինձ և այն եկեղեցիին համար որուն պետը կոչուած եմ ըլլալ։

Մնամ Ձեր Ամենապատուութեան
Անձնուէր եղբայր ի Քրիստոս
ՎԻԼԼԻԷՄ ԴՈՆԹԱՋ

digitised by A.R.A.R.@